

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 112/10

Քաղ. Երևան

28 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. ապրիլի 28-ի նիստում (արձանագրություն N79/1) քննարկեց «FERRERO» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի 2010թ. մարտի 3-ի «Pralin device» (հայտի համար՝ 967078) ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման համար հիմք են հանդիսացել "Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի "դ" ենթակետը, ինչպես նաև "Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի" 90.1-ին, 90.19-րդ կետերը, համաձայն որոնց, գրանցման ենթակա չեն այն նշաններ, որոնք չունեն տարբերակող հատկություն կամ բաղկացած են միայն այնպիսի տարրերից, որոնք՝ բացառապես ներկայացնում են ապրանքի արտաքին ձևը, որը բխում է գուտ ապրանքի բնույթից:

Բողոքում ներկայացված է, որ հայտարկվող նշանը իրենից ներկացնում է «FERRERO» ընկերության կողմից նոր արտադրվող կոնֆետների փաթեթավորման վրա պատկերված յուրահատուկ դիզայն: Ընդ որում դիզայնը թեև վերաբերում է տուփի մեջ գտնվող կոնֆետին, սակայն չի կրկնում նրա տեսքը: Կոնֆետը պատկերված է բացվածքով, այնպես որ, նմանվում է փշոտ խեցու, որի միջից «նայում է» սև մարգարիտ:

Բողոքարկողը նշում է, որ հիշյալ ընկերությունը հանդիսանում է հանրաճանաչ «FERRERO» կոնֆետների արտադրողը և համապատասխան միջազգային նշանի

IR 798984-ի սեփականատերը, որն իրենից ներկայացնում է սպառողին հայտնի «ձյան փաթիլ» կոնֆետների տեսքը: Ի դեպ, փորձը ցույց է տալիս, որ Raffaello գնդիկը կարիք ունի պահպանության և մեր երկրում բազմիցս գործ ենք ունեցել այն կեղծելու դեպքերի հետ: Բոլոր այդ դեպքերում հաջողվել է եղած գրանցման հիման վրա պահպանել նշանը կեղծումներից:

Նոր արտադրանքի արտադրական անունն է «սև խեցի»: Բողոքարկողը նշում է, որ համեմատելով կոնֆետները՝ կարելի է տեսնել, որ նոր արտադրանքը ակնհայտորեն շարունակում է գնդաձև կոնֆետների շարքը: Այս դեպքում էլ հայտատուն կարող էր խնդրարկել պարզապես մուգ շագանակագույն գնդիկի տեսքը կրկնող գրանցումը՝ հիմնվելով արդեն եղած IR 798984 գրանցման վրա: Սակայն, նա այդպես չի արել, այլ ստեղծել է յուրահատուկ դիզայն՝ բացված խեցու տեսքով, որի բացվածքից երևում է մաքուր շոկոլադե փոքր գնդիկ: Ի դեպ, միջազգային գրանցման մեջ նշանը հենց այդպես էլ կոչվում է «սև խեցի»:

Բողոքարկողը համարում է, որ ապրանքային նշանն ունի տարրերակիչ հատկություն և կարող է գրանցվել որպես ապրանքային նշան:

Կոլեգիայի անդամ պրն. Ա. Բաբայանը ներկայացրեց, որ կոլեգիայի անդամների ընդհանուր քննարկման արդյունքում պարզվել է, որ տվյալ հայտարկված նշանը ունի տարրերակող հատկություն եւ տվյալ ընկերությանը պատկանող շոկոլադե կոնֆետները շուկայում սպառողին հայտնի են իրենց յուրահատուկ դիզայնով, հետեւաբար, դասում նշված որոշ ապրանքների համար այն կարող է գրանցվել:

Առաջարկվեց հայտարկվող ապրանքային նշանը գրանցել մասնակիորեն, Նիցայի դասակարգչի 30-րդ դասի հետեւյալ ապրանքատեսակների համար՝ թխվածքաբլիթ, թխվածք, հրուշակեղեն եւ քաղցրավենիք, կակաո, շոկոլադե մածուկ, պատյաններ, մասնավորապես, շոկոլադե պատյաններ, շոկոլադ, պրալինե, տոնածառի զարդարման շոկոլադե իրեր, ակոհոլային խմիչքով լցունված շոկոլադե պատյանով մթերք:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «FERRERO» ընկերության բողոքը մասնակիորեն եւ գրանցել «Pralin device» (հայտի համարը՝ N 967078) հայտարկված ապրանքային նշանը Նիցայի դասակարգչի 30-րդ դասի հետեւյալ ապրանքների համար՝ թխվածքաբլիթ, թխվածք, հրուշակեղեն եւ քաղցրավենիք, կակաո, շոկոլադե մածուկ, պատյաններ, մասնավորապես, շոկոլադե պատյաններ, շոկոլադ, պրալինե, տոնածառի զարդարման շոկոլադե իրեր, ակոնիոլային խմիչքով լցունված շոկոլադե պատյանով մթերք:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան